В. КАЗАРЯН, С. МАНУКЯН, Матенадаран. Том I. Армянская рукописная книга VI—XIV вв., Москва, изд. «Книга», 1991, 282 с. 402 ИЛЛ.

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ, Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ, Մատենադարան, հ. 1, VI—XIV դարերի հայ ձեռագիր մատյանները, *Մոսկվա, «Գիրք» հրատ., 1991, 282 էջ, 402 նկ.*

Լույս տեսավ նոր ալբոմ-մենագրություն «Մատենադարան» խորագրով՝ նվիրված VI—XIV դդ. հայկական միջնադարյան պատկերազարդ ձեռագրերին, աշխատասիրությամբ արվեստագետներ Վիգեն Ղազարյանի և Սեյրանուշ Սանուկյանի։ Այն հրատարակվել է Մոսկվայում, տպագրվել Գերմանիայում։ Հոյակապ ձևավորված, բարձր որակով տպագրված այս գիրքը շահեկանորեն տարբերվում է մինչ այժմ լույս տեսած հայկական մանրանկարչությանը նվիրված բազմաթիվ ալբոմներից և ուսումնասիրություններից։ Սույն աշխատության հեղինակները դրել են իրենց առջև մի նոր խնդիր՝ ներկայացնել հայկական պատկերազարդ ձեռագրերը ամբողջությամբ, ընդգրկելով Մատենադարանի գրեթե բոլոր պատկերազարդ մատյանները։ VI—XIV դդ. ընտրված է 73 ձեռագիր-մատյան ինչպես բուն Հայաստանի, այնպես էլ կիլիկյան 402 մանրանկարների և ձեռագիր էջերի գունավոր, սև ու սպիտակ վերատպություններով։ Եթե մինչև այժմ ուսումնասիրողների ուշադրությունը հիմնականում գրավում էին հարցեր՝ կապված ձեռագրերի ստեղծման հանգամանքների, դրանց հարդարանքի, գեղարվեստական արժանիքների, պատկերագրության, ոճի և այլ հարակից խնդիրների հետ, ապա ներկայացվող ուսումնասիրության հեղինակներն առաջնորդվել են միանգամայն այլ սկզբունքով։ Նրանք ձգտել են ներկայացնել ձեռագիր-մատյանները իրենց ողջ էությամբ՝ բացահայտել դրանց կառուցվածքը, ի մի բերելով բոլոր բաղադրամասերը՝ նյութը, գիրը, օգտագործվող ներկերը, կազմը, պահպանակները և այլն։ Քննվում են նկարազարդ ձեռագրերի տեսակները, պատկերազարդման համակարգը, ձեռագրի մեջ նկարների զետեղման ձևը, դրանց գեղարվեստական համադրումը բնագրի և գրատեսակների հետ, խորանները, վերջնազարդերը, լուսանցազարդերը, էջի կազմությունը, գլխազարդերի ու զարդատառերի առանձնահատկությունները։ Գրքի ձևավորման նշված պարագաների ուսումնասիրությունը թույլ է տալիս թափանցել այնպիսի կարևոր խնդիրների մեջ, ինչպիսիք են ստեղծման վայրն ու ժամանակը, արվեստանոցն ու վարպետը, հարցեր, որոնց պարզաբանումը մեծ դժվարությունների հետ է կապված՝ հատկապես հիշատակարան չունեցող ձեռագրերի ուսումնասիրության դեպքում։

Աշխատությունում հանգամանորեն խոսվում է նաև առանձին դպրոցների, անվանի մանրանկարիչ-վարպետների, նրանց թողած ժառանգության մասին։ Առավել ուշադրություն է դարձվում այնպիսի ձեռագրերի նկարագրության վրա, որոնք առաջին անգամ են ներկայացվում մասնագետների ուշադրությանը։

Հետաքրքրական ու արժեքավոր է աշխատության այն հատվածը, որտեղ խոսվում է նկարազարդ խորանների մեկնությունների մասին։ Առաջին անգամ ռուսերեն թարգմանությամբ բերվում է այդ մեկնությունների հնագույն տեքստը՝ վերագրված VIII դ. անվանի հայ մատենագիր, եպիսկոպոս Ստեփանոս Սյունեցուն, արվում է նրա մեկնաբանումը։ Պատշաճ ուշադրություն է դարձվում մեկնությունների բովանդակած քրիստոնեական խորհրդանիշների պարզաբանման խնդրին, մի խնդիր, որը մինչ այժմ համեմատաբար քիչ է ուսումնասիրվել և որի կարևորությունը ակնհայտ է։ Նման մեկնությունների տարբերակները բազմաթիվ օրինակներով պահպանվել են հայ միջնադարյան մատենագրության մեջ։ Ինչպես ճիշտ նկատում են աշխատության հեղինակները, դրանք պատկանում են գրավոր այն հուշարձանների թվին, որոնց ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի միջնադարյան գեղարվեստական ու գեղագիտական մտքի զարգացման բացահայտման ասպարեզում, ընդ որում ոչ միայն հայկական, այլև ողջ քրիստոնեական աշխարհի համար։

Աշխատությունն օժտված է ևս երկու արժեքավոր մասերով. 1. Ունի համաձայնության տախտակ, ուր ժամանակագրական-համեմատական կարգով ներկայացված են հայ և քրիստոնյա ուրիշ ժողովուրդների գրքարվեստի, մշակույթի կարևորագույն նմուշներն ու նրանց

կյանքում շրջադարձային պատմական կարևորագույն իրադարձությունները, 2. ձեռագրացուցակ՝ օգտագործված բոլոր ձեռագրերի հանգամանալից ընութագրությամբ ու նկարագրությամբ՝ ներկայացված յուրաքանչյուր ձեռագրի մատենագիտությամբ։ Վերջինս շատ կարևոր է, քանի որ ձեռագրերի մի մասն առաջին անգամ է հրապարակվում։

Միայն մի դիտողություն. ճիշտ կլիներ դիրքն անվանել «Մատենադարանի նկարագրված ձեռագրեր», այլ ոչ թե «Մատենադարան»։

Սույն հրատարակությամբ հայ արվեստաբանական մատենագիտությունը համալրվում է մի նոր լուրջ ուսումնասիրությամբ՝ նվիրված հայկական միջնադարյան ձեռագիր գանձերին, որ այժմ է ընկնում հրատարակչական բարձր մակարդակով ու ճաշակով։ Հուսանք, որ աշխատության երկրորդ հատորը ևս լույս կընծայվի պատշաճ մակարդակով։

Է. Մ. ԿՈՐԽՄԱԶՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու